„ՄՈՒՐՃ"-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԼՕՆԴՕՆ. *«Հայաստան»-ի խմբագրութեան։ Ստացանք նամակը, բայց դեռ ոչ թերթի համարները։*

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ։ *«Նոր-Դար»-ը* № 110-*ում յայտնում է, իբրր «Մուրճ»-ը «կանխաւ ծանուցած է թէ թարգմանական գրուածքներ չէ ընդունում և թէ թարգմանական գրականութիւնը իւր ծրագրից դուրս է»։ Եւ նա այնքան դրական կերպով է ասում այդ, որ ընթերցողը իրաւ կը հաւատայ, եթէ սովոր է տպագրած խօսքին անպայման հաւատալու։ Արդ, մենք յայտնում ենք, որ այդպիսի ծանուցում մենք չենք արած։ Գուցէ, դէպքից օգտւելով, աւելորդ չը լինի կրկնել մեր ասածը («Մուրճ»,* № 1. *երես* 161) *թարգմանութիւնների մասին։ Մենք ասած ենք հետևեալը... «ցաւօք սրտի յայտարարում ենք, որ չը պիտի կարողանանք թարգմանական վ է պ ե ր տպել ա յ ն չ ա փ ո վ, որ (մեր գրականութեան մէջ) «պակաս» լրացնելու պարծանքը երբ և իցէ ձեռք բերել յուսանք։ «Մուրճ»-ը, իւր գրական բաժնում, գ ր ե թ է բացառապէս պէտք է հիւրընկալէ մեր ինքնուրոյն գրողների գործքերը»։*

Որպէս տեսնում է ընթերցողը, մենք յայտարարել ենք, թէ թարգմանական գրուածքներ ք ի չ ենք տպելու և ոչ թէ չենք տպելու բոլորովին։ Այդ յայտարարութիւնը անհրաժեշտ էր թէ «Մուրճ»-ի բնաւորութիւնը որոշելու և թէ թարգմանութիւններ անելու բազմաթիւ ցանկացողների պաշարումից մեզ ազատ պահելու համար։

Ինչ վերաբերում է «Էստօնական առասպել»-ին, նա թարգմանութիւն է անյայտ հեղինակից. և եթէ իբր թարգմանութիւն չէր տպած, այդ մեր կողմից լոկ մոռացութիւն էր։

ՏԻՖԼԻՍ. *պ. Միքայէլ Շահվերդեանցին։ Խարկովի ուսանողների կողմից ուղարկած աւելորդ երկու րուբլին առաջարկում ենք Ձեզ յետ ստանալու խմբագրութիւնից։*

ՂՈՒԲԱՑ. պ. Մել.-Դաղավեանցին. Մինչև № 7-ը միանգամից ուղարկեցինք Ձեզ. Սեպտեմբերից կ'ուղարկենք Բաքու. Ունիք ուղարկելու լինը ռուբլի.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. «Նէր Սանդուխտին» և «Սրաղ» ոտանաւորների հեղինակին. «Մուրճ»-ում տպագրելու բաներ չեն.

ԵՐԵՒԱՆ. պ. Էմին Տէր-Գրիգորեանցին. Ստացանք 10 ռուբլին. Ցոյս տալ չենք կարող.

ԵՆԱ. Դ-ր. Բարխուդարեանցին. Ստացանք Ձեր նամակները, որոնց մի մասը հասցրինք ուր հարկն է. Պրոֆ. Էնկենից ստացած թէ-ման՝ «Դաւիթ անկաղթի դիրքը ֆիլոսոֆայութեան պատմութեան մէջ», թէ որ ընդունէք գրել գերմաներէն, «Մուրճ»-ի ընթերցողների համար անշուշտ կ'ուղարկէք քաղուածօրէն. Շնորհակալ ենք Ձեր խոստումների համար «Հերբարտի մանկավարժութիւնը» և «Դպրոցական զրօսանք» լրագրների մասին.

ԲԱՔՈՒ. պ. Միրզա-Աւադ. Ուղարկեցինք Ձեր խնդրած գրքից երկու օրինակ.

ԲԱՔՈՒ. պ. Յակոբ Եսայի Աղամեանցին. Ստացանք 2 ռ. և ուղարկեցինք երկու օրինակ.

ԹԻՖԼԻՍ. «Հալէպ»-ին. Ձեր ոտանաւորները ստացանք, բայց դեռ ժամանակ չ'ունեցանք կարդալու և քննելու.

ԷՋՄԻԱԾԻՆ. պ. Ե. Պ.-ին. Կարդացէք վերի պատասխանը.

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼ. պ. Արշ. Մխիթարեանին. Հետևեալ №№-ում կը տպագրուեն.

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼ. պ. Գ. Զ. Լ—ցին. Ձեր ցանկութիւնը կատարել անկարող ենք.